# ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի 8-րդ առցանց աշխատաժողով




## Արձանագրություն

2021 թվականի հունվարի 20-ին MS Teams համակարգի միջոցով առցանց տեղի ունեցավ ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի (այսուհետ՝ Հարթակ) 8-րդ աշխատաժողովը, որը նվիրված էր Հարթակի ընթացիկ գործունեության և տարեկան աշխատանքային պլանի քննարկմանը, ինչպես նաև Հարթակի կայքի ներկայացմանը:

### Աշխատաժողովի օրակարգը՝

| Ժամ | Թեմա |
|---|---|
| 10:00-10:30 | **Մասնակիցների գրանցում**<br><br>Միացում առցանց հարթակին |

ՀՀ  բնական կերիանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի
համակարգման հարթակի քարտուղարություն՝
Հասցե՝ Հայաստան, 0070, Երևան, Այգեստան թաղամաս, 5-րդ փողոց, 3/1 տուն
Հեռ՝ (+37410) 517528; Էլ. հասցե՝ hartak@sdaoffice.am

| Ժամ | Թեմա |
|---|---|
| 10:30-10:45 | **Ողջույնի խոսք, օրակարգի և մասնակիցների ներկայացում** |
| 10:45-11:15 | **Հարթակի ընթացիկ ծրագրերի և 2021 թվականի աշխատանքային պլանի ներկայացում**<br>Ներկայացնող՝ Քարտուղարություն<br>Հարց ու պատասխան |
| 11:45-12:00 | Հարթակի կայք էջի ներկայացում<br>Ներկայացնող՝ Ա. Պողոսյան, Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ<br>Հարց ու պատասխան |
| 12:00-12:50 | **«Արոտավայրերի կայուն կառավարման ինստիտուցիոնալ շրջանակ»-ի նկարագրության և «Արոտավայրերի կայուն կառավարման ոլորտում ՏԻՄ լիազորությունների և գործառույթների իրականացման» մեթոդական ուղեցույցի մշակման ուղղությամբ տարված աշխատանքի ներկայացում**<br>Ներկայացնող՝ Վ. Պետրոսյան, ECOserve ծրագիր, ՏԻՄ խորհրդատու<br>Առաջարկություններ, հարց ու պատասխան |
| 12:50-13:00 | **Միջոցառման ամփոփում, հետագա քայլերի ներկայացում** |

**Հանդիպմանը մասնակցեցին՝**

| | |
|---|---|
| Իռա Փանոսյան | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն |
| Հարություն Դավթյան | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն |
| Դավիթ Մեժլումյան | ՀՀ էկոնոմիկայի նախարարության Գյուղատնտեսության ծրագրերի իրականացման վարչության ՀԳՌԿՄ-2 ծրագիր |
| Աշոտ Գիլոյան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն |

| | |
|---|---|
| Հռիփսիմե Բաբայան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն |
| Ոսկեհատ Գրիգորյան | ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն |
| Աշոտ Վարդևանյան | ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն |
| Արամ Աղասյան | ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն |
| Արուսյակ Ալավերդյան | Համաշխարհային Բանկ, Երևանյան գրասենյակ |
| Զառա Ալլահվերդյան | Հարավային Կովկասում Շվեցարական համագործակցության գործակալություն |
| Աստղիկ Դանիելյան | Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ), GIZ, ECOserve ծրագիր |
| Սիրանուշ Գալստյան | Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ), GIZ, ECOserve ծրագիր |
| Իրինա Բալասյան | Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ), GIZ, ECOserve ծրագիր |
| Աղասի Մնացյան | Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ), GIZ, ECOserve ծրագիր |
| Թոբիաս Վիթման | Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ), GIZ, ECOserve ծրագիր |
| Լիզա Հոյց | Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ), GIZ, ECOserve ծրագիր |
| Գայանե Նալբանդյան | Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ), «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագիր |
| Արմեն Քեշիշյան | Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ), «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագիր |
| Կարինա Հարությունյան | «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ (ՌԶԳ)/(SDA) |
| Գագիկ Թովմասյան | «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ (ՌԶԳ)/(SDA) |

| | |
|---|---|
| Հայկ Սահակյան | «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ (ՌԶԳ)/(SDA) |
| Աննա Պողոսյան | «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ (ՌԶԳ)/(SDA) |
| Վահե Հովհաննիսյան | «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ (ՌԶԳ)/(SDA) Հարթակի քարտուղարության համակարգող |
| Ռիմա Կաքրիլյանց | «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ (ՌԶԳ)/(SDA) Հարթակի քարտուղարության համակարգող |
| Հովիկ Սայադյան | Միավորված Ազգերի Զարգացման Ծրագիր (ՄԱԶԾ) |
| Արման Օհանյան | Անասնաբույժների Ազգային Ասոցիացիա ՀԿ |
| Գոհար Աբրահամյան | ՀՀ ԱԺ Տարածքային կառավարման, ՏԻ, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողով |
| Ռիմա Մոմչյան | ՀՀ ԱԺ Տարածքային կառավարման, ՏԻ, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողով |
| Վահագն Պետրոսյան | Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ) |
| Նաիրա Հարությունյան | Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (ՊԳԿ) |
| Մերի Սահակյան | Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (ՊԳԿ) |
| Արմեն Խաչատրյան | Սյունիքի մարզ, Սիսիան համայնք |
| Աշոտ Աղաջանյան | Սյունիքի մարզ, Գորայք համայնք |
| Վրույր Այվազյան | Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք |
| Քրիստինե Մելիքջանյան | Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք |
| Ջեմմա Հարությունյան | Շիրակի մարզ, Ամասիա համայնք |
| Գուրգեն Ավագյան | Իրավաբան, Փորձագետ-խորհրդատու |
| Լուսինե Թադևոսյան | «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն (ԱՀԿՄԿ)» հիմնադրամ |
| Լիլիթ Ավդալյան | «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն (ԱՀԿՄԿ)» հիմնադրամ |
| Փենո Միշոյան | Փրոփեր ՍՊԸ |

Աշխատաժողովին մասնակցեցին ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունների, ՀՀ ԱԺ Տարածքային կառավարման, ՏԻ, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի, ոլորտում գործող պետական, միջազգային, հասարակական և գիտական հաստատությունների ներկայացուցիչներ:




**Հանդիպման օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը՝**

1. Հարթակի ընթացիկ ծրագրերի և 2021 թվականի աշխատանքային պլանի ներկայացում,
2. Հարթակի կայք էջի www.arot.am ներկայացում,




3. «Արոտավայրերի կայուն կառավարման ինստիտուցիոնալ շրջանակ»-ի նկարագրության և «Արոտավայրերի կայուն կառավարման ոլորտում ՏԻՄ լիազորությունների և գործառույթների իրականացման» մեթոդական ուղեցույցի մշակման ուղղությամբ տարված աշխատանքի ներկայացում:

Միջոցառման սկզբում մասնակիցներին ողջունեցին և բեղմնավոր աշխատանք մաղթեցին ՀՀ Էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման և կոոպերացիայի զարգացման վարչության պետ՝ Իռա Փանոսյանը և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության պետ Աշոտ Գիլոյանը և ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության ՇՄՆ լիցենզիաների, թույլտվությունների և համաձայնեցումների վարչության պետական կադաստրների, ռեեստրների վարման և մոնիթորինգի բաժնի պետ՝ Աշոտ Վարդևանյանը:




Խոսնակները ողջունեցին ներկայիս դժվարին պայմաններում Աշխատաժողովն առցանց կազմակերպելու նախաձեռնությունը: Խոսնակները նաև կարևորեցին Հարթակի գործունեությունը՝ մատնանշելով հատկապես այս ետպատերազմյան շրջանում արոտների կայուն կառավարման և պահպանման անհրաժեշտությունը, ինչպես նաև արոտների կայուն կառավարման հայեցակարգի վերջնական տեսքի բերման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Աշխատաժողովի ընթացքում ներկայացվեցին հարթակի ընթացիկ ծրագրերն ու 2021 թվականի աշխատանքային պլանը և դրա հետ կապված հետագա քայլերը: Միջոցառման ընթացքում ներկայացվեց նաև Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերության (ԳՄՀԸ) աջակցությամբ իրականացվող «Արոտավայրերի կայուն կառավարման ինստիտուցիոնալ շրջանակ»-ի նկարագրության և «Արոտավայրերի կայուն կառավարման ոլորտում ՏԻՄ լիազորությունների և գործառույթների իրականացման» մեթոդական ուղեցույցի մշակման ուղղությամբ տարված աշխատանքը:




## Առաջարկություններ, հանձնարարականներ, եզրակացություններ

- Արձանագրվեց, որ այս ետպատերազմյան ժամանակաշրջանում արոտների պահպանության և կայուն կառավարման դերը գյուղատնտեսության և համայնքների զարգացման գործում ավելի կարևոր է, քան երբևիցե, և Հարթակում ներգրավված կառույցները պետք է շարունակեն աշխատել նախկինում որդեգրված ուղղություններով շատ ավելի համառ, ջանասիրաբար և նվիրումով:
- ՀՀ էկոնոմիկայի նախարարության Գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման և կոոպերացիայի զարգացման վարչության պետ՝ Իռա Փանոսյանը ողջույնի խոսքում անդրադարձ կատարեց «ՀՀ արոտների կայուն կառավարման հայեցակարգի» կարևորությանը, հակիրճ ներկայացրեց ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը տրամադրված տեխնիկական աջակցության շնորհիվ հայեցակարգի լրամշակման աշխատանքների ներկա ընթացքն ու մատնանշեց, որ կարիք է տեսնում Հարթակի հիմնադիր անդամ կազմակերպությունների հետ աշխատանքային հանդիպում

կազմակերպելու՝ հայեցակարգի հետ կապված մասնագիտական հարցեր քննարկելու համար:

- ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համագործակցության արդյունքում մշակման փուլում գտնվող «Արոտավայրերի կայուն կառավարման ինստիտուցիոնալ շրջանակ»-ի նկարագրության և «Արոտավայրերի կայուն կառավարման ոլորտում ՏԻՄ լիազորությունների և գործառույթների իրականացման» մեթոդական ուղեցույցը ներկայացնելուց հետո, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ՏԻ քաղաքականության վարչության պետ՝ Աշոտ Գիլոյանը անդրադարձ կատարեց այդ ուղեցույցի կարևորությանը և նշեց, որ նախարարությունը աշխատանքներ կիրականացնի համայնքների համար այդ ուղեցույցը հասանելի և կիրառելի դարձնելու ուղղությամբ: Իր կողմից նաև նշվեց, որ անհրաժեշտ է նախաձեռնել գործողություններ, որոնց արդյունքում օրենսդրական բարեփոխումներ կանցկացվեն՝ ինստիտուցիոնալ շրջանակի նկարագրության մեջ վերհանված բացերը լրացնելու համար:

- Մասնակիցներին նաև ներկայացվեցին «Արոտային ենթակառուցվածքների մոնիթորինգի, շահագործման ու սպասարկման կանոնները և միջինացված ծախսերը ներկայացնող» ուղեցույցի մշակման ընթացիք աշխատանքները: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ՏԻ քաղաքականության վարչության պետ՝ Աշոտ Գիլոյանը նշեց, որ պատրաստ լինելուն պես այդ 2 մեթոդական ուղեցույցները կտեղադրվեն ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայքում:

- Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ), «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի խորհրդատու՝ Արմեն Քեշիշյանը առաջարկեց ներառել «Համայնքների տարածքային կառավարման մարմինների Կողմից Արոտների և Խոտհարքների Կառավարման Գործընթացների Կազմակերպման Վերաբերյալ» մեթոդական ուղեցույցում ներառել նաև բյուջետային մասը փոխկապակցված համայնքների զարգացման տարեկան գործողությունների պլանավորման գործընթացի հետ: Ինչպես նաև համաձայնեցվեց նախատեսել հանդիպում և քննարկել դա:

- Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարանի Տնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր՝ Հրաչյա Զաքոյանը ծանոթանալով «Արոտավայրերի կայուն կառավարման ինստիտուցիոնալ շրջանակ»-ի նկարագրության և «Արոտավայրերի կայուն կառավարման ոլորտում ՏԻՄ լիազորությունների և գործառույթների իրականացման» մեթոդական ուղեցույցի մշակման ուղղությամբ տարված աշխատանքին, հարց բարձրացրեց վարչական իրավախախտումներ բացահայտելու հիմքերի վերաբերյալ:

- ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության ներկայացուցիչ՝ Աշոտ Վարդևանյանի կողմից հնչեցվեց և կարևորվեց դեգրադացված արոտների վերականգման ուղղությամբ աշխատանքների իրականացումը:

**Հանդիպման արդյունքում վերհանվեցին և ձեռք բերվեցին հետևյալ առաջարկությունները և համաձայնությունները՝**

**Հետագա քայլեր, ժամկետներ և պատասխանատուներ**

| **Հետագա քայլեր** | **Ժամկետ** |
|---|---|
| • Կազմակերպել հանդիպում ՀՀ Էկոնոմիկայի նախարարության հետ հայեցակարգի լրամշակման աշխատանքները և առաջացած խնդիրները քննարկելու համար | Մինչև փետրվարի 5-ը |
| • Ուղարկել Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ), «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի թիմին ծանոթանալու և կարծիք կազմելու համար «Համայնքների տարածքային կառավարման մարմինների Կողմից Արոտների և Խոտհարքների Կառավարման Գործընթացների | Մինչև փետրվարի 12-ը |

| | |
|---|---|
| Կազմակերպման Վերաբերյալ» մեթոդական ուղեցույցը և ԱԿԿ ինստիտուցիոնալ շրջանակի նկարագրությունը<br>• Կազմակերպել հանդիպում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ), «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի թիմի հետ քննարկելու վերոնշված ծրագրով նախատեսված համայնքների զարգացման տարեկան գործողությունների պլանավորման գործընթացի և ուղեցույցի բովանդակության համապատասխանեցումը:<br>• Ուղարկել մեթոդական 2 ուղեցույցները ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն հաստատման և համայնքներին հասանելի դարձնելու համար: | Մինչև մարտի վերջ |

Աշխատաժողովի ավարտին ամփոփիչ խոսքով հանդես եկավ Աստղիկ Դանիելյանը (ԳՄՀԸ), ով ամփոփեց քննարկման արդյունքները, հանդիպման ընթացքում ձեռք բերված համաձայնությունները և շնորհակալություն հայտնեց բոլորին արդյունավետ քննարկման համար:

Համակարգման հարթակի 8-րդ աշխատաժողովի վերաբերյալ անդրադարձ է հրապարակվել ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական էջում՝https://www.mineconomy.am/news/2163?fbclid=IwAR2GYjiaVrM7_DTw4OhWBaPyPSFKRyGm5EHcjRa6NwQiYaeLh16-n-y9x7A, ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի կայք էջում http://arot.am/4997/.html, Ռազմավարական Զարգացման Գործակալություն ՀԿ-ի կայքում https://sda.am/the-8th-workshop-of-the-coordination-platform-for-sustainable-management-of-ras-natural-fodder-areas-took-place/ և մի շարք լրատվամիջոցների կողմից (ցանկը ներկայացված է ստորև):

ՀՀ  բնական կերիանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի քարտուղարություն՝
**Հասցե**՝ Հայաստան, 0070, Երևան, Այգեստան թաղամաս, 5-րդ փողոց, 3/1 տուն
**Հեռ**՝ (+37410) 517528; **Էլ. հասցե**՝ hartak@sdaoffice.am

1. **News.am-** https://news.am/arm/news/624670.html?fbclid=IwAR2rgbbcrA2BdjvujsG1pmORbbUlbEkvQbSXdLDs9CTWD2PHL_oASnQjNSs

2. **ArmenPress.am-** https://armenpress.am/arm/news/1040921.html?fbclid=IwAR2LlfKV2mqMgHEaLmM4PvYWjksom8OHx5uEAa3_XFoFq1m7MRntkGbPObc

3. **Lratvakan.am-** https://lratvakan.am/details/16932/am/?fbclid=IwAR0RF9mrvxsPex9VKvFq2D8KwyWb0Qt84ucYVWpG-gNAL2oh3qMYnlYad3M

4. **NewArmenia.am**- https://newarmenia.am/news/127809

5. **Ankakh.com-** https://ankakh.com/hy/article/41960?fbclid=IwAR1P7xA_N-Mp3QLpNbRJxIvxivEKXM7jYP4xT3k-hDj3fuv1XlN2Y2CD4kA

6. **ArmDaily.am** - https://armdaily.am/?p=123822&l=am

7. **Newshub.am** - https://newshub.am/read-news/1128484/?fbclid=IwAR2kxMPRULqi-zL9zj4r4wQSoqonGDr31BGeNtxkCZqB5yU_JfqYwCDUxgc